ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՄԵԾ ՌԵԺԻՍՈՐ, ՄԱՆԿԱՎԱՐԺ ԳԻԶՈ ԺՈՐԴԱՆԻԱՆ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԵՄԱԴՐԵԼ Է «ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ» ՕՊԵՐԱՆ

Նոյեմբերի 19-ին, կյանքի 82-րդ տարում, վախճանվեց վրաց ճանաչված ռեժիսոր, ազգային եւ միջազգային բազում մրցանակների դափնեկիր Գիզո Ժորդանիան:

Ծննդյան 80-ամյակի առթիվ, 2014 թվականին, Գիզո Ժորդանիան արվեստի բնագավառում ներդրած բացառիկ ավանդի համար պարգեւատրվել էր Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարարության բարձրագույն՝ «Արվեստի քուրմ» պարգեւով:

Գիզո Ժորդանիան բեմադրել է 100-ից ավելի ներկայացումներ, 70-ից ավելի շոուներ ու ժողովրդական տոնակատարություններ՝ ինչպես Վրաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: «Հաջի Մուրադ», «Սամանաշվիլու խորթ մայրը», «Աննա Ֆրանկի օրագիրը», «Համլետ», «Աբեսալոմ եւ էթերի», «Երեք գրոշանոց օպերան»՝ ահա Գիզո Ժորդանիա-ռեժիսորի ստեղծագործությունների ոչ լրիվ ցանկը:

Գիզո Ժորդանիան ներկայացումներ է բեմադրել նաեւ Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում: Մասնավորապես, այդ թատրոնի բեմում ներկայացվեց նրա բեմադրած «Սայաթ-Նովա» օպերան:

Գիզո Ժորդանիան ծնվել է 1934 թվականին: 1958-ին ավարտել է Թբիլիսիի պետական թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը:

Մինչեւ 1961 թվականը՝ որպես պրեպարատոր, դասախոս, ավագ դասախոս աշխատել է թատերական ինստուտում, ապա՝ որպես բեմադրիչ-ռեժիսոր, գործունեությունը շարունակել է Բաթումիի դրամատիկական, Ռուսթավելու անվան ակադեմիական, Թբիլիսիի օպերայի եւ բալետի ակադեմիական, Թբիլիսիի Գրիբոյեդովի ռուսական դրամատիկական թատրոններում: Եղել է կինոյի եւ թատրոնի ինստիտուտի ամբիոնի վարիչ, ռեկտոր:

Արժանացել է Մեմեդ Աբաշիձեի, Շոթա Ռուսթավելու, Սանդրո Ախմետելու, Կոտե Մարջանիշվիլու պետական մրցանակների, Օլեգ Պոպովի, Ալբերտ Շվայցերի հուշամեդալների, Վրաստանի պետական մրցանակի:

Գիզո Ժորդանիան Վրաստանի ժողովրդական արտիստ էր:

«Վրաստան» թերթի խմբագրակազմը ցավակցում է ռեժիսոր, մանկավարժ Ռեզո Ժորդանիայի ընտանիքին ու հարազատներին նրա մահվան կապակցությամբ:

ԿՐԹԱԿԱՆ

ԳԱՆՁԱ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՀԻԱՅՐԵՅԻՆ ԲԱՆԱՀԱՎԱՔՆԵՐԻՆ

Նոյեմբերի 20-ին Երիտասարդական ազգային պալատը հյուրընկալեց երկրի պատանի բանահավաքների 18-րդ հանդիպումը:

Միջոցառմանն ընդգրկված էին Վրաստանի բոլոր երկրամասերի հանրային եւ մասնավոր դպրոցների, վարժարանների, քոլեջների, երիտասարդական տների եւ ոչ ֆորմալ կրթական հաստատությունների 6-12-րդ դասարանների ավելի քան 250 աշակերտներ, այդ թվում՝ նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետից եկած աշակերտներ:

Ձեռնարկի մեկնարկը տրվեց սեկցիոն նիստերով, որոնք վարեցին պալատի վրացերենի ուսուցիչներ Ց.Խազարաձեն, Ն.Չիխլաձեն, Ռ.Ղիփիանին եւ Ն.Նիկուրաձեն: Մասնակիցները ներկայացրին իրենց կողմից հավաքագրված ժողովրդական բանավոր ստեղծագործությունների հետաքրքիր նմուշներ՝ հեքիաթներ, պատումներ, լեգենդներ, ասացվածքներ, նաեւ՝ ժողովրդական մոտիվներով ստեղծված երգեր:

Այնուհետեւ, պալատի Հայելիների սրահում աշակերտները հանդես եկան երգերի ու երաժշտական համարների կատարումներով: Պատկերասրահում, զուգահեռաբար, ցուցադրվեցին բանահյուսության թեմաներով սաների կողմից պատրաստված կերպարվեստի, քանդակագործության ու գեղանկարչության գործեր:

Հատկանշական է, որ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղի Ռուսթավելու անվան թիվ 2 հանրային դպրոցը (տնօրեն՝ Սարգիս Դուրգարյան) արդեն երկրորդ անգամ է մասնակցում նշյալ հավաքին: Կրթօջախի վրաց լեզվի ուսուցչուհի Նանա Բարջաձե-Միխանաշվիլու անուրանալի ջանքերի շնորհիվ, աշակերտները վրացերենի պատշաճ մակարդակով ներկայացրին գրի առնված գործերը եւ հանդես եկան հայերեն ու վրացերեն գրական-գեղարվեստական կոմպոզիցիայով, որի համար նրանց հանձնվեց դիպլոմներ, գրքեր ու հուշանվերներ:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ 43 ՏՈԿՈՍԸ ԽՄՈՒՄ ՈՒ ԾԽՈՒՄ Է, 11 ՏՈԿՈՍԸ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ Է ՓՈՐՁԵԼ, ԻՍԿ 14 ՏՈԿՈՍԸ ՓՈՂՈՎ ԽԱՂՈՒՄ Է

Նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ ալկոհոլի, ծխախոտի, թմրանյութերի օգտագործման՝ Եվրոպայի դպրոցական հետազոտման արդյունքների շնորհանդեսը: Այն անցկացվեց Հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնում:

Շնորհանդեսին ներկա էին Հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության փոխնախարար Նինո Բերձուլին, կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին, սպորտի եւ երիտասարդության հարցերով փոխնախարար Ռեւազ Ջավելիձեն:

Նշենք, որ միջազգային հետազոտություններն անցկացվում են Եվրոպայի շուրջ 35 երկրներում: 2015 թվականին վերոնշյալ նախագծին միացավ նաեւ Վրաստանը:

Վրաստանում հետազոտությունների շրջանակում ներառվեցին 190 հանրային դպրոցներ, Հետազոտության շրջանակներում, վերլուծության ենթարկվեցին լրիվությամբ լրացված 2477 հարցաթերթիկ, որից 1961-ը լրացվել էին 1999 թվականին ծնված աշակերտների կողմից:

Հարցման արդյունքների համաձայն, աշակերտների կողմից համացանցից օգտվելու ժամանակահատվածը շաբաթվա ընթացքում կազմում է շուրջ 3,8 օր: Նրանց հավաստմամբ, բավականին մեծ ժամանակ է հատկացվում սոցիալական ցանցերում զբաղվածությանը:

Հարցման տվյալներով, Վրաստանի աշակերտների մոտ 11 տոկոսը կյանքի ընթացքում առնվազն մեկ անգամ փորձել է մարիխուանա կամ հաշիշ (կանեփ), 22 տոկոսը ալկոհոլային խմիչքներն սկսել է օգտագործել 13 եւ ավելի փոքր տարիքում, իսկ հարցման ենթարկված բարձրդասարանցիների 85 տոկոսը՝ տղաների 86 եւ աղջիկների 83 տոկոսը նշում են, որ առնվազն մեկ անգամ օգտագործել են ալկոհոլային խմիչք: Վրաստանցի աշակերտների շրջանում առավել հաճախ օգտագործում են գինի՝ 40, գարեջուր՝ 36, սպիրտային խմիչքներ՝ 30 տոկոսը: Հարցման ենթարկված աշակերտների պնդմամբ, նրանց 73 տոկոսը առնվազն մեկ անգամ համտեսել է էներգետիկական ըմպելիք:

Ինչ վերաբերում է ծխախոտի օգտագործմանը, ապա, հարցման տվյալներով, այն տարածված է աշակերտների 43 տոկոսի շրջանում: Տղաների շրջանում այն կազմում է 54, իսկ աղջիկների մոտ՝ 30 տոկոս: Աշակերտների 21 տոկոսը (տղաների՝ 28, աղջիկների 13 տոկոսը) առաջին սիգարետը ծխել է 13 կամ ավելի ցածր տարիքում: Հատկանշական է, որ, հարցման ենթարկվածների 60 տոկոսի պնդմամբ, սիգարետի ձեռքբերումը հեշտ է կամ շատ հեշտ:

Ինչպես նշվեց հետազոտությունների շնորհանդեսին, հետազոտության արդյունքում ստացած պատասխանները միանշանակորեն յուրահատուկ են Վրաստանում ապրող 16 տարեկան բոլոր աշակերտներին, ինչը հանգեցնում է լուրջ վերլուծության եւ համապատասխան մարմինների ու գերատեսչությունների, ծնողների ու հասարակության ակտիվ մասնակցությամբ հրատապ միջոցառումների իրականացման անհրաժեշտության:

ԳՐԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ

ԳՐԻԶԴ ԲԵՂՄՆԱՎՈՐ, ԳԵՎՈՐԳ ՀԱՅԱՍԱ



Գեւորգ Հայասան /Կուկույան/ ծնվել է 1948թ., Ախալքալաքիի շրջանի Մերենիա գյուղում: Մասնագիտությամբ բանաստեղծ է, զբաղվում է նաեւ քանդակագործությամբ եւ նկարչությամբ՝ հեղինակելով դիմաքանդակներ եւ խաչքարեր: Նկարազարդել ու ձեւավորել է շրջանի որոշ հայկական եկեղեցիներ: 1972 թ.-ից առ այսօր «Հայոց լեզու», քիչ ուշ՝ «Արվեստի պատմություն» է դասավանդում ծննդավայրի դպրոցում. վաստակի դիմաց հատուկ Պատվոգիր է ստացել ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, Վրաստանում Հայաստանի դեսպանության կողմից, իսկ 2009-ին՝ հաղթող ճանաչվել «Լավագույն ուսուցիչ» շրջանային մրցույթում: Հայաստանի սփյուռքի նախարարության կողմից պարգեւատրվել է «Մայրենիի դեսպան» մեդալով:

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության վարչության անդամ է: Հեղինակ է յոթ գրքի, որոնցից առաջինը՝ «Թափանցիկ վարագույրը», հրատարակվել է 1992 թվականին, Երեւանում, յոթերորդը՝ «Խաչված դարը», լույս է տեսել Թբիլիսիում, ՎԳՄ նախագահ Գեւորգ Սնխչյանի խմբագրությամբ: Տպագրվել եւ տպագրվում է տարբեր ժողովածուներում, այդ թվում՝ «Ձավախքը երգերի մեջ», «Հայոց մեծերի հետ»: Այժմ տպագրության է պատրաստում երկերի իր նոր՝ «Սպասում եմ դարից» ժողովածուն:

Այս տարի լրանում է Գեւորգ Հայասա բանաստեղծի, մանկավարժի եւ նկարչի մանկավարժական գործունեության 45 եւ ստեղծագործական ուղու 50-ամյակները:

Միանալով բոլոր բարեմաղթանքներին՝ «Վրաստան» թերթը շնորհավորում է նվիրյալին եւ, քաջառողջության հետ միասին, մաղթում ստեղծագործելու անսպառ եռանդ եւ վառ երեւակայություն:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Գ.Հայասայի՝ վրաց ու հայ ժողովուրդների դարավոր բարեկամության, Հայրենիքի նկատմամբ սիրո թեմաներով բանաստեղծություններից:

ԱՊՐՈՒՄ ԵՆ ՍԻՐՈՎ ՀԱՅՆ ՈՒ ՎՐԱՑԻՆ

Երբ մարդ չունենա
Ընկեր, դրացի,
Համն էլ կկորչի
Իր կերած հացի...
Ուր մնաց՝ հանկարծ,
Թե չարը վայրագ
Ազգի դեմ հանի
Թշնամու բանակ...
Ու դրա համար
Դարեդար ու ճիշտ,
Հաշտ ու միասին
Ապրում են սիրով
Հայն ու վրացին...

ԼԵԶՈՒՆ, ԲԱՌՆ ԻՄ, ՏԱՌՆ ԻՄ ՀԱՅՈՑ

Իմ մշտաբառ լեզուն հայոց,
Տեսնես ցավի ու արցունքի
Քանի՞-քանի էջ է գրել,
Քանի՞ դարի բեռ է տարել
Իմ վշտակիր լեզուն հայոց...

Մայրամրմուռ ու ողբագիր
Քանի՞ պոետ ու պատմագիր,
Քանի՞ կույսի ցավ ու հառաչ
Էջ են դարձրել անմեկնելի
Արյունաբառ լեզվով հայոց...
Քանի՞ մահ ու մահերի գիր,
Հույսի դուռը փակող «սեւ գիր»
Գոյ ու կյանքի կիսատ ճամփով
Հասցրել է, ա՜խ, մեր էրգիր,
Իմ հայրացավ լեզուն հայոց...

Հին է, նոր է...

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

î²¶Ü²ä²ÈÆ ìÆÖ²Î²¶ðàôÂÚàôÜ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԵՑ ՎԱՅՐԿՅԱՆՈՒՄ՝ ՄԱՀ

Այն, որ ծխելը վտանգավոր սովորություն է եւ ծանր է անդրադառնում առողջության վրա, ակնհայտ է, սակայն, վիճակագրական կոնկրետ թվերով, ինչպե՞ս է արտահայտվում այդ սովորության վտանգը:

Ի. Մինասյան

Նինոծմինդա

Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաշվարկներով, աշխարհում յուրաքանչյուր վեց վայրկյանը մեկ ծխախոտի հետեւանքով առաջացած հիվանդություններից մարդ է մահանում:

Ծխող տղամարդկանց վաղաժամ մահացության ռիսկը 2-3 անգամ բարձր է չծխողների համեմատ, իսկ կանանցը՝ 1,3-1,9 անգամ: Ռիսկն ավելանում է գլանակների քանակի ավելացման եւ ծխախոտի օգտագործման տեւողության հետ:

Ծխողների մոտ թոքերի քաղցկեղի ռիսկն աճում է 12 անգամ, սրտամկանի ինֆարկտի եւ ուղեղանոթային ու ծայրամասային անոթների հիվանդությունների ռիսկը՝ 50%-ով, իսկ թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններից մահացության դեպքերի մոտ 80%-ը պայմանավորված է ծխախոտի օգտագործմամբ:

Ծխախոտի օգտագործման տարածվածության եւ դրա հակաառողջական, տնտեսական եւ սոցիալական հետեւանքները կանխելու նպատակով, կիրառվում են տարբեր մեխանիզմներ, օրենսդրական սահմանափակումներ եւ այլ միջոցառումներ:

Նշենք, որ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության որոշմամբ, նոյեմբերի 17-ը հայտարարվել է ծխելուց հրաժարվելու միջազգային օր:

Ð²ì²ø²Ìàô

ԵՐԲ ՀԵՔԻԱԹԸ ԿՈՆԿՐԵՏ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ Է ԳՏՆՈՒՄ

Շատ հեքիաթների թեմաներով գեղարվեստական եւ մուլտիպլիկացիոն ֆիլմեր են նկարահանվել: Հետաքրքիր է, երբեւէ փորձեր արվե՞լ են այդ՝ նկարահանումներին օգտագործվող դեկորների հավաքածու ստեղծելու ուղղությամբ:

Մ. Խաչատրյան

Թբիլիսի

Այո', նման փորձ է կատարել Irregular Choice բրիտանական ընկերությունը: Այն կոշիկի հավաքածու է թողարկել «Մոխրոտիկը» հեքիաթի եւ Disney-ի համանուն մուլտֆիլմի մոտիվներով:

Հավաքածուում տեղ են գտել մի քանի մոդելներ՝ բալետկաներից մինչեւ բոտիլիոններ, որոնք զարդարված են ժապավեններով, ստրազներով եւ ֆիլմի հերոսների պատկերներով: Նորույթի գինը դեռ չեն նշել:

Irregular Choice ընկերությունը հիմնվել է 1999 թվականին, մասնագիտանում է ոչ սովորական դեկորներով կոշիկների ստեղծման բնագավառում:

Օրինակ՝ 2014 թվականին վաճառքում հայտնվել է միաեղջյուրի գլխի տեսք ունեցող կրունկով կոշիկների հավաքածու:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

2030 Թ. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԵՐՐՈՐԴԸ ԿԱՊՐԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Աշխարհի բնակչության երկու երրորդը 2030 թվականին ապրելու է քաղաքներում, որոնց բաժին կընկնի համաշխարհային ՀՆԱ-ի 80 տոկոսը: Այդ մասին ասված է ՄԱԿ-ի՝ բնակավայրերի գծով ծրագրի զեկույցում:

Փաստաթղթի համաձայն, ներկայում աշխարհի բնակչության հինգերորդ մասն ապրում է ընդամենը 600 քաղաքներում, որոնց բաժին է ընկնում գլոբալ ներքին համախառն արդյունքի 60 տոկոսը: Ընդ որում, առավել արագ զարգացող ուրբանիստական կենտրոններ են ճանաչված մեկ միլիոնից պակաս բնակչությամբ միջին ու փոքր քաղաքները, որոնց բաժին է ընկնում աշխարհի բնակչության մինչեւ 59 տոկոսը:

Զեկույցի հեղինակները նշում են, որ ուրբանիզացման գործընթացը հնարավորություններ է ընձեռում առաջիկա 14 տարում Կայուն զարգացման նոր նպատակների հասնելու համար: Սակայն, եթե ուրբանիզացման գործընթացն ընթանում է չպլանավորված եւ չի կառավարվում, ուրբանիզացումը կարող է հանգեցնել մարդկանց միջեւ անհավասարության աճի, հետնախորշերի ընդլայնման եւ ավերիչ կլիմայական փոփոխությունների:

Նշվում է նաեւ բնակչության շրջանում անհավասարության մակարդակի մեծացումը 20-րդ դարավերջի տվյալների համեմատությամբ:

ԱՄՆ-ի Մարդահամարի բյուրոյի տվյալներով, Երկրագնդի բնակչությունը, 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ, կազմել է շուրջ 7,3 մլրդ մարդ:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ 13 ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոգեբանների հետազոտությունները թույլ են տալիս առանձնացնել սովորությունների մի շարք, որոնք հատուկ են աղքատ մարդկանց: Հետաքրքիր է տեսնել, թե ինչպես են աղքատ մարդիկ դրանց հետեւում: Սակայն ամենահետաքրքիրը տեղի է ունենում այն ժամանակ, երբ տաղանդավոր մարդիկ կրկնում են աղքատների սովորությունները եւ նմանվում նրանց:

1.Աղքատները միշտ մեղավորներ են փնտրում: Աղքատ մարդը երբեք պատասխանատվությունն իր վրա չի վերցնում: Նա, ամենայն հավանականությամբ, դրանում կմեղադրի իր գործընկերներին, ղեկավարին կամ համակարգին, քան կընդունի իր պարտությունը: Աղքատ մարդն այսպես է մտածում՝ եթե նրանք չլինեին, ես հաջողակ կլինեի, ինձ բոլորը խանգարում են, ես չեմ կարող ոչինչ ասել:

2. Ժամանակ ձգել: Դեռ մանուկ հասակից մեզ սովորեցնում են ժողովրդական ասացվածքը՝ «7 անգամ չափիր, մեկ անգամ կտրիր»: Ժամանակն անցնում է, իսկ դուք դեռ մտածում եք, չափում: Ցանկալի արդյունքի հասնում է առավել նախաձեռնող մեկը, ով «կտրում է» ձեր բաժինը եւ տանում: Հաղթում է նա, ով չի վախենում անել առաջին քայլը եւ ռիսկի գնալ, ով օգտագործում է իր մտքերը, եւ ոչ թե դրանք պահում իր հիշողության անկյուններում: Աղքատ մարդու մտածողություն ունեցողը միշտ ժամանակ է ձգում, իր իսկ անգործությունը վերագրում ուրիշներին:

3. Անվտանգ գործել: Աղքատները ռիսկի չեն դիմում: Նրանք գերադասում են կայուն, թեկուզ՝ ոչ մեծ եկամուտ: Արդյունքում, ապրում են աշխատավարձից աշխատավարձ՝ մտացածին կայունության հովանու ներքո:

4. Անվճար սովորել: Աղքատների տիպիկ ներկայացուցիչը բաժանորդագրված է բազմաթիվ անվճար վարժանքների եւ սեմինարների, որոնց մեծ մասը նա չի լսում: Արդյունքում, մարդն ապրում է՝ սովորելու պատրանք ունենալով, սակայն իրականում ոչ մի զարգացում չկա: Հաջողակ նախաձեռնող դառնալու համար, անհրաժեշտ է կենդանի շփում հովանավորի հետ, անհաժեշտ է հստակ պլան նպատակին հասնելու համար: Վարժանքի գինը ոչ միայն ապագա հաջողության ցուցանիշն է, այլեւ ձեր մոտիվացիայի ցուցանիշը:

5. Մյուսներին չվճարել աշխատանքի համար: Աղքատի հոգեբանություն ունեցող մարդը սիրում է ապրել ուրիշների հաշվին: Ֆիլմերը, երաժշտությունը նա ներբեռնում է անվճար կայքերից: Նրա փիլիսոփայությունն է՝ վճարովի ծառայությունները եւ ապրանքները ստանալ անվճար: Նրա կյանքը հեշտացնում են անվճար սերվիսները, որոնք ստեղծվել են աղքատների կողմից եւ աղքատների համար: Սկզբում վճարովի ծառայությունն անվճար է: Ուրիշի մտավոր սեփականության գողությունն ու խաբեությունը մարդուն դրդում է միշտ ապրել աղքատության մեջ:

6. Խղճալ ինքն իրեն: Հաճախ մարդիկ իրենց խնդիրների արմատը տեսնում են իրենց շրջապատող միջավայրում՝ լինի դա անբարենպաստ աշխարհագրական դիրքը, կազմվածքի թերությունը, աղքատ ընտանիքում ծնված լինելը, վատ կրթությունը, այս կամ այն երկրում ապրելը եւ այլն: Աղքատ մարդու համար գոյություն ունեն ինքն իրեն խղճալու բազմաթիվ առիթներ, իսկ խղճալով՝ կապիտալ չես կարող ունենալ:

(Շարունակելի)

ՍՈՎՈՐԻՐ ՆԵՐԵԼ

ԻՍԿԱԿԱՆ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Շատերն են երազում իսկական սիրո մասին: Իսկ գիտե՞ք, թե այն իրականում ինչ է նշանակում: Դա ամենեւին էլ այն չէ, ինչ երազում են շատերը՝ անվերջ շարունակվող սիրավեպ, ծաղիկներ, նշանադրություն, հարսանիք, երեխաներ: Այդ ամենից զատ ու այդ ամենից առաջ, նախ պետք է հաղթահարել թերացումների, ստի, վեճերի, վիրավորանքի, նույնիսկ հնարավոր է, դավաճանության խութերով պատված դժվարին ճանապարհը, որն անցնում են բոլոր նրանք, ովքեր փորձում են գտնել իրենց կեսին: Սակայն, միայն այն հաջողակներն են կարողանում այդ ճանապարհը հաղթահարել ու սիրո անհաս գագաթը նվաճել, ովքեր ունակ են ներել, այլ խոսքով նրանք, ովքեր ունակ են իսկապես սիրել: Այդ պատճառով ընտրեք նրան, ում կարող եք ձեր կյանքը, ձեր հոգին նվիրել, հանուն որի, կարող եք անտեսել ձեր հպարտությունն ու ինքնասիրությունը, հանուն որի, պատրաստ եք զոհողությունների, ում կարող եք առաջին տեղը հատկացնել՝ ձեզ վերապահելով երկրորդը լինելու պատիվը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Փոթորկի ատեն քեզ պատսպարող ծառը երբեք մի կտրեր:

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ
(1843-1891)
Հայ մեծ երգիծաբան

Ես նա եմ հենց, ով չի քաղում կյանքը, որպես թոշնած վարունգ,

Ով ընկերոջ համար մեռնելը երգ ու խաղ է լոկ համարում:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Ում խոսքը ծնվում է ծանր երկունքից հետո, նրան լսում են բոլորը: Մարդկանց համար պարզ է, որ այդ խոսքի մեջ ճշմարտություն է թաքնված:

ՈՒԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ
(1564-1616)
Անգլիացի դրամատուրգ

Առանց մտածելու խոսելը առանց նշանառության կրակել է:

ՍԵՐՎԱՆՏԵՍ
(1547-1616)
Իսպանացի գրող

Անշնորհակալ որդին գորտնուկ է հոր դեմքին. կտրելը ցավոտ է, թողնելը՝ տգեղ:

ՉԻՆԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔ

Ուրիշին մեծարելուց առաջ քեզ մի' մոռացիր: Երբեք: Արանքից օգտվողները վխտում են այսօր:

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸àîÜ°ð

☺ - Մա'մ, իսկ ես ումի՞ց եմ խելքս ժառանգել:

- Հայրիկից...

- Որտեղի՞ց գիտես:

- Որովհետեւ իմն ինձ մոտ է մնացել:

☺ Կինը՝ ամուսնուն.

- Սիրելի'ս, երեկ ինձ այնքան հաճոյախոսություն արեցիր: Նման բան քեզանից ես կյանքում չէի լսել:

- Կներես, հարբած էի:

☺ - Ձեզ վրա հարձակվել են դրամի համար եւ ծանր վնասվածքներ հասցրել: Հիշո՞ւմ եք գողի դեմքը,- հարցնում է քննիչը:

- Իհարկե, ո՞վ չի հիշի իր կնոջ դեմքը:

☺ - Գիտե՞ս, որ Արեւելքում կինն իր ամուսնուն չի տեսնում մինչեւ հարսանիքի օրը:

- Մեզ մոտ հակառակն է: Ահա ես ամուսնացա եւ ամուսնուս չեմ տեսնում հարսանիքից հետո:

☺ Երիտասարդ ծնողներն իրենց նորածին որդուն բերում են բժշկի մոտ: Վերջինս նայում է եւ ասում.

- Ի՞նչ գեղեցիկ երեխա ունեք:

- Դուք այդ խոսքերը, երեւի, ասում եք բոլոր նորաթուխ ծնողներին:

- Ո'չ, միայն նրանց, ում երեխաներն իրոք գեղեցիկ են:

- Իսկ մյուսներին:

- Մյուսներին ասում եմ. «Ձեր երեխան ձեզ շատ նման է»:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԵՏԽՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոյեմբերի 23-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ ԵՏԽՎ մոնիտորինգային հանձնաժողովի՝ Հայաստանի մասով համազեկուցողներ Ալան Միլիճի եւ Ջուզեպպե Գալատիինի հետ:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը կարեւորեց պարբերական դարձած հանդիպումները, որոնք, նրա համոզմամբ, հնարավորություն են ընձեռում անդրադառնալ Հայաստանում իրականացվող բարեփոխումների ընթացքին, տվյալ ժամանակահատվածում արձանագրված արդյունքներին, ինչպես նաեւ լսել եվրոպական արժեհամակարգին քաջածանոթ մարդկանց գնահատականն ու անաչառ տեսակետը:

Համազեկուցողները գոհունակությամբ փաստեցին, որ Հայաստանում խորհրդարանական ժողովրդավարություն հաստատելու ուղղությամբ առաջընթացը բավականին արագ եւ հետեւողականորեն է իրականացվում, թեեւ որոշ խնդիրներ կան լուծելու:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան Հայաստանի առաջիկա խորհրդարանական ընտրություններին, Հայաստանի սահմանադրության փոփոխություններից հետո օրենսդրության համապատասխանեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքին, ԵՏ-ի հետ Հայաստանի համագործակցության զարգացմանը, մտքեր փոխանակեցին նաեւ Արցախի հիմնախնդրի կարգավորման շուրջ:

ՆԱՏՕ-Ն ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՓՈԽՇԱՀԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի փոխօգնական Ջեյմի Շիի հետ, ով Հայաստանում էր գտնվում «ՆԱՏՕ-ի շաբաթ»-ի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին մասնակցելու նպատակով:

Էդվարդ Նալբանդյանը դրական գնահատեց Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը, կարեւորեց Հայաստան-ՆԱՏՕ 2014-2016 թթ. Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հաջող իրականացումը եւ 2017-2018 թթ. համար նոր անհատական ծրագրի մշակումը:

Իր հերթին, ՆԱՏՕ-ի բարձրաստիճան պաշտոնյան նշեց, որ Հյուսիսատլանտյան դաշինքն արժեւորում է իր հարաբերությունները Հայաստանի հետ եւ շահագրգռված է շարունակել համագործակցությունը:

Զրուցակիցները քննարկեցին Հայաստան-ՆԱՏՕ քաղաքական երկխոսության, Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությանն առնչվող հարցեր, մտքեր փոխանակեցին տարածաշրջանային խնդիրների, միջազգային խաղաղապահ գործողություններին Հայաստանի արդյունավետ ներգրավվածության շուրջ:

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆԸ ՆՇԵՑ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԸ

Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը նշեց հիմնադրման 75-ամյակը: Հոբելյանին նվիրված տոնակատարությանը ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ առաջին տիկին Ռիտա Սարգսյանը: Սերժ Սարգսյանը շնորհավորական խոսք հղեց հոբելյանի առթիվ:

Հայաստանի նախագահը Հ.Պարոնյանի անվան թատրոնի երաժշտական կոմեդիայի պետական մի շարք ներկայացուցիչների պարգեւատրեց պետական պարգեւներով՝ թատրոնի 75-ամյակի առթիվ, մշակույթի բնագավառում ներդրած ավանդի եւ թատերական արվեստի բնագավառում ունեցած վաստակի համար:

Մասնավորապես, թատրոնի տնօրեն Կարապետ Շահբազյանը պարգեւատրվել է Մովսես Խորենացու մեդալով, իսկ դերասաններ Արթուր Կարապետյանին, Վարուժան Մանուկյանին, Սաթիկ Հախնազարյանին, Նարինե Ալեքսանյանին, Ավետիք Խալաթյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի պատվավոր կոչում:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ ՌՈՒՍԵՐԵՆԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՀԱՐՑԸ»

- Հայաստանի պետական լեզուն հայերենն է, լեզուն մեր անկախության հիմնարար արժեքներից մեկն է, եւ «Լեզվի մասին» օրենքը փոփոխության ենթակա չէ,- այս մասին նշեց Հայաստանի ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանը՝ անդրադառնալով ռուսաց լեզուն որպես պետական երկրորդ լեզու ճանաչելու հնարավորության մասին հարցին եւ լրագրողներին խնդրեց նման հարց չբարձրացնել.- Հայաստանում այդպիսի հարց չի կարող գոյություն ունենալ:

- Ցանկանում եմ մեկընդմիշտ ֆիքսենք. ՀՀ պետական լեզուն հայերենն է, մեր լեզուն մեր անկախության հիմնարար արժեքներից մեկն է, եւ «Լեզվի մասին» օրենքը փոփոխության ենթակա չէ: Երկրորդ հարցը օտար լեզուների զարգացման հիմնախնդիրն է, որովհետեւ, եթե ուզում ենք ունենալ գիտակրթական պոտենցիալ ունեցող տարածք, արդյունք, մեր երկրի քաղաքացիները պետք է, մայրենի լեզվի փայլուն տիրապետումից զատ, ունենան օտար լեզուների իմացություն: Եվրոպական երկրներում, բացի սեփական լեզվից, առկա է երեք լեզվի գործածություն, մենք գնում ենք առնվազն երկու օտար լեզվի խորացման ուղղությամբ. հանրակրթական ընդհանուր դպրոցներում լեզվի կրթության բարելավման եւ խորացման ուղղություններով, որովհետեւ ունենք, օրինակ՝ ֆրանսերեն, գերմաներեն թեքումով դպրոցներ,- ասաց նախարարը եւ հավելեց, որ այս երկու հարցերը պետք է իրարից տարանջատել:

Լ.Մկրտչյանի խոսքով, ցանկացած օտար պաշտոնյա, պաշտոնական անձ ցանկացած կարծիք կարող է հայտնել, սակայն մենք ունենք օրենսդրություն, այն աշխատում է, եւ այն փոփոխելու որեւէ հիմք չկա:

Նշենք, որ օրերս Ռուսաստանի ԱԳՆ հատուկ կարգադրությունների դեսպան Էլեոնորա Միտրոֆանովան հայտարարել էր, որ ՌԴ-ն պետք է ջանք գործադրի նախկին ԽՍՀՄ պետություններում ռուսերենին օրենսդրական հատուկ կարգավիճակ տալու ուղղությամբ:

«ԻՄ ԱՐՑԱԽԸ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 19-ՐԴ ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆԸ ՀԱՆԳԱՆԱԿԵՑ 15 428 777 ԴՈԼԱՐ

«Իմ Արցախը» խորագիրը կրող «Հեռուստամարաթոն-2016» -ի արդյունքում, որը թվով 19-րդն է, հավաքագրվել է 15 միլիոն 428 հազար 777 դոլար: Մարաթոնի ընթացքում, ամենամեծ նվիրատվությունը՝ 5 միլիոն դոլար, կատարել է ամերիկահայ բարերար Անդրանիկ Բաղդասարյանը:

Նոյեմբերի 24-ին մեկնարկած «Հեռուստամարաթոն-2016»-ի արդյունքում, հավաքված գումարները կնպատակաուղղվեն Արցախում քառօրյա պատերազմի ժամանակ տուժած բնակավայրերի վերականգնմանը, խաղաղ բնակչության անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղված միջոցառումներին եւ Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը: Կշարունակվեն նաեւ նպատակային հատկացումներով ծրագրերը Հայաստանում ու Արցախում:

Այս տարվա մարաթոնի արդյունքում հավաքված գումարը զգալիորեն ավելի է նախորդ տարիների արդյունքներից: 2014թ. մարաթոնի արդյունքում հավաքված 12 միլիոն 399 հազար 550 դոլարն ուղղվել էր Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի շինարարությանը, իսկ «Հեռուստամարաթոն-2015»-ի ընթացքում, որը կրում էր «Մեր տունը» խորագիրը, հավաքվել էր 10 միլիոն 378 հազար 465 դոլարի նվիրատվություն: Հանգանակված գումարն ուղղվել էր Արցախում 5 եւ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին տներով ապահովելուն, ինչպես նաեւ բարերարների կողմից ընտրված նպատակային ծրագրերի իրականացմանը Հայաստանում եւ Արցախում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Նոյեմբերի 21-23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը երկօրյա այցով գտնվում էր Մոսկվայում, որտեղ մասնակցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի ծննդյան 70-րդ հոբելյանական տարեդարձի հանդիսություններին:

ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Նոյեմբերի 22-ին Հայաստանի սփյուռքի նախարարությունում հյուրընկալվեցին անվանի լրագրողներ, Հանրային հեռուստաընկերության եւ Հանրային ռադիոյի աշխատակիցներ:

Բարձր գնահատելով Սփյուռք-Հայաստան գործակցության զարգացման ու լուսաբանման ուղղությամբ կատարված աշխատանքը՝ Հանրային հեռուստատեսության հոբելյանի առթիվ Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը պարգեւներ հանչնեց հայկական հեռուստատեսության առաջատարներին: Մասնավորապես, հեռուստալրագրողներ Արփեն Մովսիսյանը եւ Արթուր Բախտամյանը պարգեւատրվեցին ՀՀ սփյուռքի նախարարության Ոսկե մեդալով, Հանրային ռադիոյի «Կամուրջ» ծրագրի ղեկավար Ռուզան Առաքելյանը պարգեւատրվեց «Մայրենիի դեսպան» մեդալով:

Նախարարության պատվոգրեր ստացան Հանրային հեռուստատեսության ռեժիսորներ Մարինե Սահակյանը, Մարինե Բլբուլյանը եւ Հասմիկ Մարգարյանը:

ԱՌԱՆՑ ԿՈՆՏԱԿՏԻ AMERICAN EXPRESS ՔԱՐՏԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այսուհետ, Հայաստանում American Express-ի բացառիկ գործընկեր ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը թողարկելու է առանց կոնտակտի տեխնոլոգիայի վրա հիմնված չիպային American Express Gold եւ American Express Blue քարտեր, որոնք կլինեն ավելի հարմար եւ անվտանգ:

Վճարումների «առանց կոնտակտի» տեխնոլոգիան թույլ է տալիս իրականացնել վճարումներ՝ պարզապես քարտը մոտեցնելով առանց կոնտակտի քարտեր սպասարկող տերմինալին՝ հաճախորդներին տրամադրելով առավել հարմարավետ, ապահով եւ արագ վճարումներ իրականացնելու հնարավորություն: Իսկ 10.000 ՀՀ դրամը չգերազանցող գործարքների դեպքում, այլեւս անհրաժեշտ չէ քարտը անցկացնել տերմինալով, մուտքագրել PIN կոդը եւ ստորագրել վճարման անդորրագիրը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԿԱՁՄԵԼ Է 0,4 ՏՈԿՈՍ

Հայաստանի տնտեսական ակտիվության յուցանիշը, 2016 թվականի հունվար-հոկտեմբերին 0,4 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի յուցանիշը: Այս տարվա հոկտեմբերին, սեպտեմբերի համեմատ, յուցանիշը նվազել է 18,7 տոկոսով:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում է գրանցվել շինարարության, առեւտրի շրջանառության, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտներում: Շինարարության ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 9,8 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում նվազումը 6,3 տոկոս է: 2015թ. հունվար-հոկտեմբերի համեմատ, ընթացիկ տարում ծառայությունների ծավալն (առանց առեւտրի) աճել է 7,7 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նվազել է 7,3 տոկոսով:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(25 նոյեմբերի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ԱՄՆ դոլար-դրամ՝ առքը-477, վաճառքը-481, եվրո-դրամ՝ առքը-503, վաճառքը-512, ռուսական ռուբլի-դրամ՝ առքը-7,30, վաճառքը-7,49:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

28.11.2016. Սուրբ Հուլիանե եւ Վասիլուհի կույսերի հիշատակության օր

29.11.2016. Սուրբ Ղունկիանոս քահանայի, Տարագրոս, Պրոբոս եւ Անդրոնիկոս վկաների եւ Սուրբ Պողոս առաքյալի աշակերտ Ոնեսիմոսի հիշատակության օր

ՀՐԱՏԱՊ

ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ

Շտապ բժշկական օգնություն - 112
Պարեկային ոստիկանություն - 112
Հրշեջ-փրկարար ծառայություն - 112
Հրշեջ-փրկարար օպերատիվ ծառայություն - 01, 011, 275-20-85, 241-17-71, 241-17-72
Պահպանության ոստիկանություն - 125
Գլխավոր տեսչություն - 126
Տեղեկատվական բյուրո - 118 08
Քաղաքապետարանի թեժ գիծ - 272-22-22
Առողջապահության նախարարության թեժ գիծ - 294-49-11, 294-34-98
Ժողովրդական պաշտպան - 299-58-98, 292-24-79
Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն - 237-69-50, 245-45-33
Երեխայի իրավունքների պաշտպանության քաղաքային կենտրոն - 299-66-04
Եղանակի բյուրո - 243-95-31, 245-95-32
«ՂազՏրանսԳազ»-ի տեղեկատվական ծառայություն - 231-04-04
Գազի վթարային ծառայություն- 04, 274-86-27, 274-89-04
ԹԷԼԱՍԻ-ի տեղեկատվական կենտրոն - 25-52, 225-52-11
ԹԷԼԱՍԻ-ի թեժ գիծ - 277-99-99, 227-44-11
Ջրամատակարարման թեժ գիծ - 293-11-11
Ջրամատակարարման շահագործման ծառայություն - 248-72-88
Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ - 293-11-11
Օդանավակայանի տեղեկատվական բյուրո - 231-04-21
Երկաթուղային կայարան - 256-35-66, 256-47-60
Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան - 234-26-92
Նավթլուղիի ավտոկայարան - 274-83-03, 274-63-23

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏՍԵԻԼ - 2016»

ՄԱՐԻԱՄ ՄԱՄԱԴԱՇՎԻԼԻՆ, ՄԵՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՆԱՀԻՏ ԱԴԱՄՅԱՆԸ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ

Մալթայի մայրաքաղաք Վալետտայում անցկացվող «Մանկական Եվրատեսիլ-2016» հեղինակավոր միջազգային մրցույթում, երրորդ անգամ հաղթեց Վրաստանը, որի ներկայացուցիչ Մարիամ Մամադաշվիլին հանդես եկավ «Արեւ» երգով եւ հավաքեց 239 միավոր: Հայաստանը ներկայացնող Մերի Վարդանյանն ու Անահիտ Ադամյանը՝ իրենց «Տարբեր» երգով, հավաքելով 232 միավոր, զբաղեցրեցին երկրորդ հորիզոնականը:



Այս տարի մրցույթում որոշ փոփոխություններ էին տեղի ունեցել. մրցույթին հնարավորություն ունեին մասնակցել 9-14 տարեկան երեխաներ՝ նախկինում 10-15-ի փոխարեն: Այս տարի հանվել էր հեռուստադիտողի քվեարկությունը: Հաղթողը որոշվեց մասնակից երկրների պրոֆեսիոնալ եւ մանկական ժյուրիի կողմից, ինչպես նաեւ փորձագետների ժյուրիի քվեարկության արդյունքում, որի կազմում էին եվրոպացի երեք հայտնի արվեստագետներ:

Մրցույթին մասնակցեց եվրոպական 16 երկիր, նաեւ՝ Ավստրալիան:

Փառատոնին, Վրաստանի ներկայացուցչի հաղթանակից հետո, օրակարգի հարց դարձավ «Մանկական Եվրատեսիլ-2017-ը» Վրաստանում անցկացնելը: Ինչպես նշեց Վրաստանում Եվրատեսիլի պրոդյուսոր Նաթիա Ուզնաձեն, վերոնշյալ հարցը առաջիկա մեկ ամսում լուծում կստանա:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ԿՈՎԿԱՍԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Նոյեմբերի 25-ին Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Դաղստանի եւ Չեչնիայի ժամանակակից նկարիչներն իրենց աշխատանքները ցուցադրեցին «Կովկասի միջով» խորագիրը կրող ցուցահանդեսում, որը կազմակերպվեց Թբիլիսիի Ի.Գրիշաշվիլու անվան պատմության ազգային թանգարան «Քարվասլա»-ում:

Ցուցահանդեսը, որը կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 12-ը, անցկացվում է «Ժամանակակից արվեստի պատկերասրահ» նախագծի շրջանակներում: Նրա նպատակը Վրաստանում ժամանակակից արվեստի աջակցումն ու զարգացումն է, ինչպես նաեւ նրա առաջնորդումը՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային ասպարեզում:

«Կովկասի միջով» ցուցահանդեսն այս ծրագրի արդեն չորրորդ նախագիծն է: Այն միավորել է կովկասյան տարածաշրջանի տաղանդավոր հինգ նկարիչներին՝ Վահրամ Աղասյանին (Հայաստան), Վաժիկո Չաչխիանուն (Վրաստան), Ալի Հասանովին (Ադրբեջան), Տաուս Մախաչեւին (Դաղստան) եւ Ասլան Գայսումովին (Չեչնիա):

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը: Վրաստանի հավաքականը նոր աղյուսակում առաջադիմել է երեք հորիզոնականով եւ ներկայումս հանգրվանել 119-րդ տեղում:

Նշանակալի առաջընթաց է ունեցել Հայաստանի հավաքականը: Այն առաջադիմել է 38 տեղով եւ զբաղեցնում է 87-րդ հորիզոնականը: Աղյուսակը գլխավորում է Արգենտինան, Բրազիլիան երկրորդ տեղում է, Գերմանիան՝ երրորդը:

ՔՈՒԹԱՅԻՍԻԻ «ՏՈՐՊԵԴՈՆ»՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԳԱՎԱԹԱԿԻՐ

Քութայիսիի Տորպեդո» ֆուտբոլային ակումբը, նոյեմբերի 22-ին Զեստափոնիում անցկացված Վրաստանի գավաթի խաղարկության եզրափակիչ փուլում՝ 2:1 հաշվով, պարտության մատնեց «Մերանի» թիմին եւ նվաճեց պատվավոր գավաթը:

Այսպիսով, Քութայիսիի «Տորպեդոն» իր պատմության մեջ երրորդ անգամ դարձավ երկրի գավաթակիր: Հիշեցնենք, որ քութայիսցիները վերջին անգամ պատվավոր գավաթը նվաճել էին 2001 թվականին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Սերգեյ Եսենինի հերոսուհի: 4.Հինգերորդ նոտան: 7.Հայոց էպոսի հերոսներից: 9.Վրացի նախկին ֆուտբոլիստ ... Կալաձե: 10.Ավստրիացի հայտնի կոմպոզիտոր: 11.Հայ գրող ... Դավոյան: 14.Հայերենի փոքրացնող վերջածանց: 16.Գրական ստեղծագործության տեսակ: 17.Հայկական ամսանուն: 18.Համադասական շաղկապ: 20.Սիրված երգչուհի Եսայանը: 22.Փոքրոգի, ցածրակարգ: 24.Ֆրանսահայ կինոռեժիսոր Վեռնոյը: 26.Տորմ..., շավ...: 27.Ստորադասական շաղկապ: 28.Յոթերորդ նոտան: 29.Աղ..., Չղ...: 30.Գլխին մազ չունեցող: 32.Պարսկահայ երգիչ ... Սիմոնյան: 35.Երեւանյան հին թաղամաս: 37.Պետական պարգեւ: 38.Չկնորսի գործիք: 40.Դան..., Յուս...: 41.Ոչ դուրեկան, տգեղ: 43.Հերոս «Հարսնացուն հյուսիսից» ֆիլմում: 44.... կարմիր գույն: 45.Թբիլիսահայ գրող Նար-Դոսի «Ես եւ ...» վիպակը: 47.Հայ ծանրամարտիկ Վահան ...: 49.... ու ձախ: 50.Հարցական դերանուն: 53.Նիդերլանդացի հայտնի նկարիչ ... Գոգ: 55.Ամերիկյան լրագրող Վոգելը: 56.Ջարդ, սպանդ, ցեղասպանություն: 57.Մեծ աշխարհամաս: 58.Հայ ճանաչված դերասան ... Շերենց: 60.13-րդ դարի վանքային համալիր Հայաստանում: 63.Ջրալի ճաշ, ապուր:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հայ ֆիդայապետ ... Նաթալի: 2.Գերմանացի գրող Հենրիխ ...: 3.Վրաց երգչուհի Բրեգվաձե: 4.Ֆրանսիացի դերասանուհի ... Բեռնար: 5.Ոխը առնող, վրիժառու: 6.Մոնա ...: 8.Հողի մակերեսի չափման միավոր: 12.Հայ գրող Պեշիկթաշլյանը: 13.Հին հռոմեացի քաղաքական գործիչ Հուլիոս ...: 15.Ֆրանսիացի հայտնի ֆիզիկոս Մարիան: 19.Անրի Վեռնոյի «Մայրիկ» ֆիլմի հերոսուհու դերակատար ... Խանջյան: 20.Նիրհել, թմրել: 21.Քիմիական տարր: 23.Մամիկոնյաններին պատկանող ամրոցը: 25.Ագաթա Քրիստիի գրական հերոս ... Պուարո: 28.Երեւանի «Գոյ» թատրոնի ռեժիսոր եւ դերասան Ստեփանյանը: 31.Մազերի ներկ: 33.Բանջարանոցային կուլտուրա: 34.Ուսուցչապետ (հնացած ձեւը): 36.Վրաց թագուհի: 39.Վրաստանի էներգետիկայի նախարարի ազգանունը: 41.Պատմական գավառ Արեւմտյան Հայաստանում: 44.Մակերեսի չափման միավոր: 46.Հայոց Բագրատունի թագավոր: 48.Արյունը սառեց նրա ...ներում: 51.Վանքային համալիր Հայաստանում՝ Խոր ...: 52.Վրաց գրող ... Դոլիձե: 54.Հերոսուհի «Կովկասի գերուհին» ֆիլմում: 58.Հմուտ օդաչու: 59.Հայաստանի Ձինված ուժեր: 61.Օժանդակ բայ: 62.Անձնական դերանուն:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ֆաբրիկա: 8.Իսանի: 9.Քեն: 10.Խառատ: 13.Զուբակ: 19.Մոնո: 20.Համեմունք: 23.Ծիրան: 24.Սուտակ: 29.Լարան: 31.Ձլոտի: 34.Ուռի: 35.Արես: 36.Կասետ: 39.Գահ: 41.Կանդ: 43.Ելակ: 46.Ասավ: 48.Քամի: 49.Մուդ: 51.Բաղ: 52.Տեսակետ: 54.Սաշա: 56.Նիհար: 57.Բալի: 58.Իկ: 59.Թասակ: 60.Գիվի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Աբուռ: 2.Քիստ: 3.Մաքս: 4.Ձինջ: 5.Սա: 6.Դիսկո: 11.Առած: 12.Ապեր: 14.Ում: 15.Թո: 16.Անիկա: 17.Քուն: 18.Իքս: 21.Մինոր: 22.Մայիս: 25.Ուլիկ: 26.Տա: 27.Արուս: 28.Հուդա: 30.Նետ: 32.Լադա: 33.Տենդ: 37.Ալեք: 38.Երամ: 39.Գոս: 40.Հովատակ: 42.Նժդեհ: 44.Լարա: 45.Կիրակի: 46.Ագարա: 47.Աբեբա: 50.Ուտիք: 53.Սաթ: 54.Սիգ: 55.Շիվ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445